182. ՈՍՊԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՜լ ա չիլա՜լ մին շիհա՜ր, ըստեղ էլ մին Ոսպ։ Էս Ոսպըս էլ զասապ ա իլա՜լ։ Էս շիհա՜րոմն էլ մին մարթ ա իլա՜լ, անումն Արզըման։ Էս Արզըմանը շատ հարուստ ա իլա՜լ։ Մին վախտ քյինացալ ա էս Ոսպիցը մես առալ, փողն էլ տըվալ չի։ Մին քանի վախտանց ա կացալ, էս Ոսպն էլ քյինացալ ա Արզըմանին տռանը կաղնալ հու ասալ թա. «Արզըմա՜ն, փողըս տալու՝ տո՜, Արզըմա՜ն, փողըս տալու՝ տո՜»։ Ըստըհենց շատ ասալ ա, էս Արզըմանը ուրա՜ն դյա՜դոցն ասալ ա, թա. «Մին տռւս եկեք տեսեք էն հո՞ւ վա»։ Տռւս ըն եկալ, տեսալ զատ չի կա։ Դե մին պիծի զատ ա էլի, տեսալ չըն։ Քյինացալ ըն ասալ. «Աղա՜, ընդեղ զատ չի կա»։

Էլ՞ա գյա՜դեքյը որ քյինացալ ըն, ասալ ա. «Արզըմա՜ն, փողըս տալու՝ տո՜, Արզըման, փողըս տալու՝ տո՜»։ Ըստըհենց շատ ասալ ա, Արզըմանն ա տռւս կյա՜մ, ասում, թա. «Դե էտ հու վը՞ս, եկ ըստեղ»։ Էս քյինացալ ա քշտին կաղնալ, ասալ. «Արզըմա՜ն, փողըս տալու՝ տո՜»։ Թա. «Դե որչա՞նք տամ»։ Թա՝ մանեթկես։ Մանեթկեսը տվալ ա, տարալ ա հմբարալ, տեսալ մին կապեկ պակաս։

Եկալ ա Արզմանին տռանը կաղնալ, ասալ. «Արզըման, փողըս տալու՝ տո՜»։ Էլհա Արզըմանը հուրա՜ն գյա՜դին ասալ ա, թա. «Մին տռւս եկ, տես էն հո՞ւ վա»։ Տռւս ա եկալ, տեսալ՝ մարթ չի կա. քյինացալ ա ասալ. «Ա՜ղա, մարթ չի կա»։ Հելլա որ գյա՜դան քյինացալ ա, ասալ ա. «Արզըմա՜ն, փողըս տալու, տո՜, Արզըման, փողըս տալու, տո՜»։ Արզըմանը տռւս ա եկալ, թա. «Էտ

հու վը՞ս, ե՛կ ըստեղ»։ Էս Ոսպը քյինացալ ա քշտին կաղնալ ա, ասալ, թա. «Արղըմա՛ն, փող ըս տալու, տո՛»։ Թա. «Ընդե որչա՞նք ա, թա չորս հաՀրուր մանեթ»։ Չորս հաՀրուր մանեթը տվալ ա, տարալ ա հմբարալ, տեսալ մին մանեթ պակաս։ Էլհա քյինացալ ա Արղրմանին տռանը կաղնալ հու ասալ, թա. «Արղրմա՛ն, փող ըս տալու, տո՛, Արղըմա՛ն, փող ըս տալու, տո՛»։ Արղըմանը տուս ա եկալ, թա. «Հու վը՞ս, եկ ըստեղ տեսնամ»։ Քյինացալ ա քշտին կաղնալ, ասալ. «Արղըմա՛ն, փող ըս տալու, տո՛»։ Ասալ ա, թա. «Որչա՞նք ա»։ Նա էլ ասալ ա, թա. «ՀինգյհաՀրուր մանեթ»։ ՀինգյհաՀրուր մանեթը տվալ ա։

Ետնան մին դոնում էլ քյինացալ ա ասալ յա եկ ախպեր տաՀռնանք, յա էլ քու փողերտ լոխ կրմսխեմ։ Թա. «Դե լավ ա, եկ ախպեր տաՀռնանք»։ Ըստեղ ախպեր ըն տաՀռալ։ Էս Արղըմանը ասալ ա. «Էս հունց անե՞մ, էս հունց չանե՞մ, որ ըստրա ըսպանիլ տամ»։ ԳյաՀդոցը սվըրցրալ ա, թա. «Դե Ոսպին փռնեցեք, քիցեցեք ղազանին մեչը, իփեցեք, տիրեք փլավին երան, ես օտեմ։ Էս գյաՀդեքը Ոսպին փռնալ ըն, իփաՀլ, տիրաՀլ փլավին երան, տարալ տըվալ ուրան, կերալ ա։ Էս Ոսպը ըստրա փորին մեչին փորը չնկոոտալ ա։ Էս Արղըմանն էլ ուրսին գյաՀդոցը մարթը մին թոր ա տվալ. թա. «Ես հես ա քյունում ըմ ք...., ք.... տեղը եկեք, որ Ոսպը տուս կյա, թրավը թխեցեք, ըսպանեցեք»։ Ետնան քյինացալ ա թա ք..., գյաՀդեքյը քյինացալ ըն մինն էն կոխկին ա կաղնալ, մինը՝ էն կոխկին։ Լիհա՞ որ ք... ա, թրավը թխալ ըն՝ ո... կտրալ։ Ետնան պերալ ըն ընտրա ո... մաՀլամ տիրաՀլ, սղցրալ։ Ետնան էս Ոսպրս տուս ա եկալ, եկալ, թա. «Լավ ա, տու վեր ինձ օդում իր թա ըսպանես, էտա ըտըհենց կինի հա»։ Եկալ ըն բրշալ, պրծալ։ Էս Ոսպրս մին հետ ասալ ա, թա. «Ինձ հետի կնեգ օդի, յա էլ էս սհաթրս քեզ կըսպանեմ»։ Թա՝ լավ ա։ Էս Ոսպին հետի կնեգ ըն ըրալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինդյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։